ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021թ. N ՄՈ/154 - 2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 400-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի մայիսի 6-ի N5/76 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի նոյեմբերի 30-ի «Գոռ Ասատրյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն նշանակելու մասին» N 400-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշմամբ հաստատված հավելվածի 4.1 կետում «360000 (երեք հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով» բառերը փոխարինել «460000 (չորս հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի և յուրաքանչյուր ամիս վճարովի ծառայություններից 1 տոկոսի չափով որպես բոնուսային վճար:» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 19.05.2021 12:13:59 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230